ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա Խմբային աշխատանք – Համագործակցային ուսուցում իմ փորձից

Կատարող Ունուպօղյան Հասմիկ Սերգեյի
/անուն, ազգանուն, հայրանուն/

Գյումրու թիվ 7 հիմնական դպ. ՊՈԱԿ, կերպարվեստ (III խումբ)
/դպրոց մասնագիտություն ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Փարկիթյան Անահիտ
/անուն, ազգանուն/

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Համագործակցային ուսուցման մեթոդները.....6

Համագործակցային ուսուցման ձևերը 7

Եզրակացություն 17

Առաջարկություններ 18

Գրականության ցանկ.....19

Ներածություն

Գեղագիտական դաստիարակության հրատապ խնդիրներից մեկը երեխաների մոտ գեղեցկությունն իրենց մեջ, մեկ այլ մարդու մեջ, շրջապատող աշխարհում ընկալելու ունակության զարգացումն է: Օտար գեղագիտական փորձը հասկանալու, ընկալելու, ընդունելու, անձնական գեղագիտական դատողություններն ու գեղագիտական ստեղծագործությունն ընկալելու ունակության զարգացումն է:

Այս ամենին հասնելու, զարգացնելու համար պետք է ունենալ հաղորդակցական կարողություններ՝ ներառյալ գեղագիտական գործունեությունը:

Նշված խնդիրների լուծման լավագույն ճանապարհը համագործակցային ուսուցումն է, որը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային, կոլեկտիվ աշխատանքային համագործակցության նոր մշակույթ, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորում են խմբի անդամների հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու:

Կերպարվեստի դասերին խմբային, համատեղ գործունեության նպատակն է՝ աշակերտները ձեռք բերեն էսթետիկ հաղորդակցության փորձը, զգացմունքային ըմբռնում, գեղարվեստական և ստեղծագործական մտածողություն, դիտողունակություն, դժվարությունները հաղթահարելու ջանքեր, սկսած աշխատանքը ավարտին հասցնելու կարողություններ, որը ենթադրում է նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

Այս ամենն իրականացնելու գործում մեծ դեր է հատկացվում ուսուցչին: Դասավանդողը ինքը պետք է տիրապետի վերը նշված կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությանը, նախաձեռնողականությանը, հետազոտելու և ստեղծագործելու կարողությունների ձեռք բերմանը:

Համագործաքցային ուսուցում – խմբային աշխատանք

Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական, աջակցող փոխկախվածության ապահովումը: Համագործակցային տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են.

1. **Դրական փոխկախվածություն –** խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողների ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:
2. **Դեմ առ դեմ խթանող փոխազդեցություն –** Խմբի անդամները փոխանակում են տեղեկություններ, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց:
3. **Հաշվետվություն և պատասխանատվություն –** խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է կատարված աշխատանքի արդյունքների համար:
4. **Սոցիալական հմտություններ –** խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը:
5. **Խմբային գործընթաց –** ամրապնդվում են սոցիալական հմտությունները, ապահովվում է խմբի անդամների միջև հետադարձ կապ:

Այս հարցում ես ունեմ իմ անձնական կարծիքը՝ V-VII դասարաններում համագործակցային աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է I-IV դասարաններում աշակերտների մեջ ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունների մշակմամբ, որի օգնությամբ, կարևորագույն անձնային որակի՝ ինքնուրույնության ձևավորմամբ: Օրինակ՝ ես հանձնարարում եմ աշխատանքային տետրում (I դասարան), դասագրքում (II դասարան), պատկերված նկարները: Աշխատանքի դժվարությունը կայանում է նրանում, որ շատ ծնողներ չգիտակցելով, որ երեխայի մեջ անվստահություն են մտցնում իրենց գործողություններով՝ մտածելով, որ տրված առաջադրանքը երեխայի համար բավականին բարդ է, իրենք են նկարում երեխայի փոխարեն: Այդ պատճառով որոշ աշակերտներ դասարանում դրսևորում են անվստահության վարքագիծ, լաց են լինում, հրաժարվում են նկարել: Այդպիսի դեպքերում ես տարբեր մեթոդներ և մոտեցումներ եմ կիրառում, որպեսզի աշակերտներին ներգրավեմ աշխատանքային գործընթացի մեջ:

1. Աշակերտին հնարավորություն եմ տալիս անցնել շարքերով և դիտել մյուս աշակերտների աշխատանք կատարելու ընթացքը, որից հետո երեխան

փորձում է ոգևորված ինքնուրույն աշխատել, կամ ցանկություն է հայտնում աշակերտներից մեկի հետ նկարել:

2. Շատ դժվարացողներին կանչում եմ գրատախտակի մոտ և սկսում ենք միասին նկարել:

Աշակերտը փորձում է նույնությամբ ընդօրինակել նկարը, որից հետո սկսում է աշխատել իր աշխատանքային տետրում: Նրան խրախուսելու համար ծնողի աշխատանքը գնահատում եմ բավականին ցածր, իսկ երեխայի աշխատանքը բավականին բարձր՝ անգամ „10” բալ, որը մեծ ոգևորություն և ուրախություն է պատճառում նրան:

Մոտեցման այս ձևը օգնում է աշակերտներին շատ շուտ ձեռք բերել ինքնուրույն աշխատելու համարձակություն և կարողություններ որից հետո արգելում են ծնողներին իրենց փոխարեն աշխատել, նկարել:

Համագործակցային ուսուցման մեթոդները

1. **Աշակերտների թիմային առաջադիմություն –** գնահատվում է աշխատանքի առաջընթացը, լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ չնչին առաջընթացի պարագայում նրանք ներդրում են ունենում թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է օգնեն դասընկերներին և պահպանեն ու բարելավեն իրենց նախորդ ցուցանիշները:
2. **Երեք բանալի և մեկ կողպեք –** աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն և այն հիմնավորելու կարողություն:
3. **Խմբային հետազոտության մեթոդ –** այն հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Մեթոդի հիմնական նպատակը կոնկրետ ուսումնասիրությունն է: 20-րդ դարի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուրին գտնում է, որ դպրոցը աշակերտին պետք է սովորեցնի միասին աշխատել, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառվի կյանքում:
4. **Շրջագայություն պատկերասրահում –** նպատակն է զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքները ներկայացնելու հմտություններ:

Համագործակցային ուսուցման ձևերը

1. **Բակային –** Ես անցկացրել եմ բաց դաս: «Դպրոցի խաղահրապարակի ձևավորում» (3 ժամ): Նկարահանված է տեսահոլովակ, որը գցված է թիվ 7 հիմնական դպրոցի ֆեյսբուքյան էջ, յուտյուբ: Ես կներկայացնեմ այդ դասի շատ հակիրճ պլանավորումը (այն ամբողջությամբ ներկայացրել եմ որպես դասի պլան - կոնսպեկտ) և տեսահոլովակից նկարներ:

Դասի նպատակը – Խթանել սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը:

- Բացահայտել աշակերտների ստեղծագործական ներուժը:
- Ներգրավել ոչ ակտիվ, թույլ կարողություններով, սեփական ուժերի հանդեպ անվստահություն ցուցաբերող աշակերտներին:
- Ծանոթացնել դիզայնի հայեցակարգին, բացահայտել դիզայնի կապը առօրյա կյանքի և բնության հետ:
- Ձևավորել գեղեցիկը տեսնելու, գնահատելու, տեսածը ճիշտ վերարտադրելու կարողություն:
- Պահպանել աշխատանքային մշակույթի, հիգիենայի և անվտանգության նորմերը:
- Ուժեղացնել դժվարությունները հաղթահարելու ջանքերը, կարողանալ սկսած աշխատանքը հասցնել ավարտին:
- Դաստիարակել ընկերասիրություն, փոքրերի նկատմամբ ուշադիր վերաբերմունք:
- Այլ կարծիքների նկատմամբ հարգալից վերաբերմունք:

Անհրաժեշտ նյութեր և գործիքներ – ուսուցիչների համար՝ մուլտֆիլմի հերոսների, կենդանիների, թռչունների, ծաղիկների, թիթեռների. . . նկարներ:

Աշակերտների համար – յուղաներկեր, տարբեր տրամաչափի վրձիններ, լուծիչ, լաթեր, ձեռնոցներ, գոգնոցներ, գլխարկներ, կավիճներ, մարկեր, ֆլոմաստեր, դատարկ տարաներ:

Դասի ընթացքը – Խաղահրապարակը ձևավորելու համար հավաքագրվել էին IV – IX դասարանների աշակերտներ:

Դասի կազմակերպչական մասից հետո անցկացվում է զրույց դիզայնի վերաբերյալ, աշխատանքը կազմակերպելու կանոններին, յուղաներկով աշխատելու տեխնիկային հետևելու մասին: Աշակերտները նկարազարդելու են բակի տաղավարը, տակառիկ – ծաղկամանները, նստարանները, ճոճանակները:

Աշակերտները բաժանվում են 2-3 հոգանոց խմբերի՝ խառը – տարբեր դասարաններից, տղա և աղջիկ: Որից հետո աշակերտներին է տրամադրվում անհրաժեշտ նյութերն ու գործիքները և առաջարկվում է սկսել աշխատանքը: Այս աշխատանքն արժևորվում է նրանով, որ սկզբնական շրջանում անտարբեր մոտեցում ցուցաբերող, կերպարվեստ առարկայի նկատմամբ մերժողական վերաբերմունք ունեցող աշակերտները ցանկություն հայտնեցին միանալ իրենց ընկերներին և աշխատել: Այս տիպի աշխատանքը նպաստալից եղավ նրանով, որ որոշ աշակերտներ իրենց մեջ բացահայտեցին թաքնված տաղանդ և նրանց մեջ նույնիսկ ցանկություն առաջացավ մասնագիտանալ նկարչության ուղղությամբ:

Աշխատանքը խրախուսվեց դպրոցի տնօրենի կողմից և աշակերտները պարգևատրվեցին գովասանագրերով:

2. **Դասարանային** – Դասի թեման է՝ տարվա եղանակները (2-3 ժամ): Աշակերտներին առաջարկվում է բաժանվել 5-6 հոգանոց 4 խմբերի: Յուրաքանչյուր խումբ նկարելու է տարվա մի եղանակը՝ իրենց ընտրությամբ: Այս թեմայով աշխատանքի առավելությունն այն է, որ ստեղծվում է միջառարկայական կապ կերպարվեստ, երգ և տեխնոլոգիա առարկաների միջև, ստացվում է ինտեգրված դաս: Միացվում է Ա. Վիվալդիի տարվա չորս եղանակները:

Աշակերտներին տրվում է ընտրության հնարավորություն՝ կարող են նկարել, կամ կատարել դեկորատիվ աշխատանք՝ ձմեռը պատկերելիս կարող են օգտագործել գունավոր թղթեր, պենոպլաստ, բամբակ: Գարուն, ամառ, աշուն պատկերող խմբերը կարող են օգտվել գունավոր թղթերից, ճյուղերից, տերևներից, ուլունքներից և նման տարբեր նյութերից:

Խմբերի մեջ կատարվում է աշխատանքի բաժանում՝ մեկը ծաղիկ է պատրաստում մյուսը տերև է կտրատում, III-ը էսքիզ է անում ստվարաթղթի վրա: Աշխատանքի ընթացքում մեկն օգնում է մյուսին: Էսքիզի վրա տեղադրվում են պատրաստված դետալները, սոսնձվում են և վերջում կատարվում է որոշ հատվածների գունավորում:

Աշխատանքի ավարտից հետո յուրաքանչյուր խմբից մի հոգի ներկայացնում է իրեն տեսակետը խմբի աշխատանքի վերաբերյալ, որից հետո կատարում են մեկը մյուսի աշխատանքի վերլուծություն և մեկնաբանում:

Սովորողները համագործակցային աշխատանքի ընթացքում դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ լուծում և համագործակցային կարգավորման հմտություններ:

Աշակերտը գիտի, որ իր կատարած աշխատանքի համար միայն ինքը չի պատասխանատու և իր արած սխալը և բացթողումը կարող է խմբի աշխատանքի ձախողման պատճառ դառնալ, ուստի ավելի պատասխանատու է գործին մոտենում: Հասարակության մեջ սխալ կարծիք է դրսևորված, որ բոլոր երեխաները ի վիճակի չեն նկարել, չունեն նկարչական ձիրք և կարողություններ: Նման մոտեցմամբ հիասթափություն են առաջացնում նույնիսկ սեփական երեխայի մոտ:

Ես ամեն տարի պատրաստում եմ 1-7-րդ դասարաններից յուրաքանչյուրի համար դասարանում կատարած աշխատանքների կոլաժներ, ցույց եմ տալիս դասապրոցեսը, որտեղ երևում է, թե աշակերտներն ինչ բավականությամբ ու կլանվածությամբ են աշխատում: Այդ կոլաժները գցում են թիվ 7 հիմնական դպրոցի ֆեյսբուքյան էջ:

Ես գտնում եմ, որ բոլոր երեխաներն ընդունակ են, ունեն նկարչական ձիրք և կարողություններ: Մնում է կարողանալ զարգացնել նրանց ստեղծագործական ներուժը և բացահայտել իսկական տաղանդներ:

3. Խմբային աշխատանքի ձևերից մեկն էլ **խաղն է**, որը ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր է սովորողների համար այլև ունի ուսուցողական, ճանաչողական նշանակություն, միևնույն ժամանակ խթանում է աշակերտների ստեղծագործական միտքը: Խաղերը զարգացնում են աշակերտների երևակայությունը, ստեղծագործական մտածողությունը արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, ինչպես նաև խաղացողների թիմային մտածողությունը: Ուսուցման միօրինակությունը հոգնեցուցիչ է: Այն հաղթահարվում է խաղի օգնությամբ:

Խաղացողները ոչ միայն սովորում են ենթարկվել բոլորի համար ընդհանուր կանոններին, այլև պատասխանատվություն են զգում խաղընկերների նկատմամբ: Խաղերի ժամանակ կարող է դրսևորվել խաղացողի կազմակերպչական կարողությունները, պատասխանատվություն ստանձնելու խիզախությունը: Խմբային խաղերի շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են ինքնուրույնություն և ընկերասիրություն:

Այսպիսով խմբային գործունեությունը սահմանվում է որպես սովորողների հավասար անձնական փոխազդեցություն, որն ուղղված է գործունեության բարձր մակարդակի, անհատական բավարարվածության հասնելու համար ընդհանուր ջանքերի համակարգում և համախմբում:

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա: Խմբային աշխատանքի ընթացքում մեծանում է նաև անհատական օգնության անհրաժեշտությունը ընկերների կողմից: Օգնականը միևնույն ժամանակ օգտվում է ոչ պակաս, քան «թույլը» քանի որ նրա գիտելիքները, թարմացվում են, ձեռք են բերում ճկունություն և ճշգրտվում են դասընկերոջը բացատրելիս: Խմբային աշխատանքը խթանում է – սովորողների մտավոր աշխատանքը.

- Կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար
- Համագործակցություն
- Այլոց նկատմամբ հարգանք
- Խմբի մաս լինելու գիտակցում:

Խմբային գործունեությունը արվեստի դասերին դարձել է ցանկալի ու հաճելի:

Եզրակացություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցների տիրապետելն է: Այս իմաստով շատ կարևոր է ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը:

Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Մանկավարժական նշանակությունից բացի այն ունի նաև հասարակական գործառույթ:

Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն ու ձեռքբերումը:

Առաջարկություններ

1. Կերպարվեստ առարկայի արդյունավետությունը բարձրացնելու համար ծնողների, աշակերտների և որոշ ուսուցիչների միջից մեկընդմիշտ պետք է հանել երկրորդական առարկա հասկացությունը:
2. Մեր այժմյան սերունդը բավականին հեռացել է բարոյական, էսթետիկական նորմերից: Իմ կարծիքով հասունացել է մի պահանջ՝ դպրոցում էթիկայի, էսթետիկայի ժամեր մտցնելու անհրաժեշտությունը:
3. Ապահովել կերպարվեստ առարկայի մեթոդական ձեռնարկով և 5-7-րդ դասարանների դասագրքերով:
4. Ստեղծել կերպարվեստի կաբինետ, որի համար անհրաժեշտ են գիպսից առարկաներ, կենցաղային առարկաներ, գործիքներ (վրձիններ, բաժակ . . .), նյութեր (ջրաներկ, գունավոր մատիտներ. . .) A 4, A3 ֆորմատի թղթեր, վերատպություններ, դիաֆիլմեր:

Գրականության ցանկ

1. https://multiurok.ru/blog/hamagortsakts-ayin-owsowts-man-met-odnere.html
2. http://gspi.am/media/journal/2014n1b/37.pdf